Բաց Հասարակության Հիմնադրամներ

ՀՐԱՎԵՐ

Երիտասարդական ճամբարի մասնակցության

Նոյեմբերի 9, 2018թ.

Հարգելի երիտասարդներ,

Ցանկանու՞մ եք սկսել կամ ընդլայնել արդեն առկա Ձեր հասարակական ակտիվությունը:

Ցանկանու՞մ եք ձեռք բերել նոր գիտելիքներ արդարադատության, մարդու իրավունքների պաշտպանության և կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտներում:

Ունեք հրաշալի միտք, բայց վստահ չեք, թե արդյոք կկարողանաք իրականացնել Ձեր գաղափարը:

Ցանկանու՞մ եք նոր ընկերներ ունենալ և հետաքրքիր ժամանակ անց կացնել:

Եթե այո, ապա այս ճամբարը Ձեզ համար է:

Բաց հասարակության հիմնադրամներ – Հայաստանը կազմակերպում է երիտասարդական **5-օրյա ճամբար**, որը տեղի կունենա ս.թ. **նոյեմբերի 25-30-ը, Աղվերանում:**

Ճամբարը նպատակ ունի հնարավորություն ընձեռել եռանդով լցված երիտասարդներին, ովքեր նոր են ներգրավվում, կամ ցանկություն ունեն ներգրավվելու հասարակական կյանք՝ ճանաչելու միմյանց, ծանոթանալու փորձառու իրավապաշտպանների և ոլորտային մասնագետների հետ, ստանալու նոր գիտելիքներ մարդու իրավունքների պաշտպանության և կոռուպցիայի դեմ պայքարի վերաբերյալ, միասին քննարկել գաղափարներ և դրանց իրականացման հնարավորությունները:

Ճամբարի հիմնական թեմաներն են՝ 1) մարդու իրավունքներ, ազատություններ և արդարադատություն և 2) կոռուպցիայի դեմ պայքար:

Մարդու իրավունքների, ազատությունների և արդարադատության թեմայի շրջանակներում ոլորտում մեծ փորձառություն ունեցող՝ Հայաստանի հելսինկյան կոմիտե իրավապաշտպան կազմակերպության փորձագետների հետ միասին քննարկելու ենք մարդու իրավունքների և ազատությունների գաղափարախոսության պատմական զարգացումները՝ ավելի մանրամասն ուսումնասիրելով Հայաստանում մարդու իրավունքների պաշտպանության ներպետական և միջազգային մեխանիզմները, խոսքի, արտահայտվելու և հավաքների ազատության, խտրականությունից, խոշտանգումներից զերծ մնալու իրավունքները և այլ առանցքային հարցեր:

Կոռուպցիայի դեմ պայքարի թեմայի շուրջ նույնպես, ոլորտում ամենափորձառու կազմակերպություններից մեկի՝ Թրանսփարենսի ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոնի, մասնագետների հետ կքննարկենք թե ինչ է կոռուպցիան, ինչ դրսևորումներ ունի, որոնք են

կոռուպցիայի դեմ պայքարի բաղադրիչները միջազգային և ներպետական մակարդակներում և այլ ուշագրավ խնդիրներ:

Այս չափազանց հետաքրքիր քննարկումները, ճամբարի ընթացքում, կհամատեղվեն ինտելեկտուալ և զվարճալի խաղերով, ժամանցային այլ միջոցառումներով:

Դասընթացի ավարտից հետո հաջողակ մասնակիցները հնարավորություն կունենան գործնականում կիրառել ստացած գիտելիքները, ներկայացնելով հայտեր, իրենց նախընտրած ոլորտներում փոքր դրամաշնորհային ծրագրեր իրականացնելու:

Մասնակիցների ճանապարհածախսը, սնունդը և գիշերակացը կփոխհատուցվի ԲՀՀ-Հայաստանի կողմից:

Ով կարող է դիմել՝

Ճամբարին մասնակցելու համար կարող են դիմել **երիտասարդները՝** Հայաստանի բոլոր մարզերից և Երևանից ովքեր.

- **18-25** տարեկան են
- ունեն մեծ **ցանկություն ներգրավվելու** հասարակական կյանքին՝ փոփոխություն իրականացնելու համար:

Դիմելու կարգը՝

Մասնակցությունը լինելու է մրցակցային՝ դիմողների հայտերի ընտրության եղանակով: Նախապատվությունը տրվելու է հասարակական կյանքում **առավել քիչ** փորձ ունեցող և նման միջոցառումներին քիչ կամ ընդհանրապես չներգրավված երիտասարդներին:

Դիմելու համար անհրաժեշտ է լրացնել հայտը, որը հասանելի է հետևյալ հղումով՝ https://goo.gl/ehPBXQ

Ժամկետներ՝

- Հայտերը պետք լրացնել մինչև ս.թ. **նոյեմբերի 18-ը, ժ. 18.00**
- Ընտրված մասնակիցները կտեղեկացվեն մինչև ս.թ. նոյեմբերի 20ը:

Հարցերի և պարզաբանումների համար կարող եք դիմել Բաց հասարակություն հիմնադրամներ – Հայաստան-ի գրասենյակ Աշոտ Գրիգորյանին կամ Հայկ Աբրահամյանին՝ զանգահարելով (+374 10) 533862 համարով, կամ գրելով ashot@osi.am էլ փոստին: